նասիրութիւնը տես Արարատ 1910. Յունուար, Մարտ. մեր . յօդուածը. «Նախնեաց Ցիշատակներ» վերնագրով։

Նկարուած է 135ᵖ., ընագիրը և լուսանկարը նոյն մեծութեամբ։

55. Երուս. Մատ. Ս. Յակ. № 2556/1, Աւետարան, կազմը թաւշի վերայ արծաթապատ, ոսկեջրած, 48×36 սմ., Շղթայակրի ժամանակից։ Նկարազարդ։ Հաստ մագաղաթ, երկիջեան, 32×10 սմ.։ ԳՐԻՉՆ ու ՏԵՂՆ անյայտ։ ՍՏԱՑՈՂՔ Գագիկ Շահնշահ, որդի Աբասայ, Կարսի վերջին թագաւորը և Գորանդուխտ թագուհին՝ իրենց Մարեմ դստեր հետ 5ᵖ. 135ᵖ. 222ᵖ. 371ᵖ. ԺԱՄԱՆԱԿ. 1028—1064 թ. թ.

Դաճոր. Հատուածների գլխագրերը ընագրի երկաթագրից աւելի մեծ են, բայց ոչ մանրանկարչական. կողքից կապուած լուսանցքի զարդի, թռչունի կամ կենդանու պատկերի հետ։ Նկարագրութիւնը Արարատ. 1910. եր. 332

Լուսանկարուած է 125ᵐ. ընագիրը չորս անգամ մեծ է մեր նկարից։

56. Մատ. Ս. Էջմ. № 260/275 (Կար. 253). Աւետարան, ազնիւ մագաղաթ, 25,2×19 սմ., 269 թերթ։ ԳԻՐ Միջին երկաթագիր, շատ սիրուն, երկիջեան, 17×5 սմ։ Ընթեցանութեան նշաններ ունի կարմրագեղով, բայց ոչ բուն գրչի գործ, որովհետև հին, սև թանաքով կէտադրութեան մօտ կայ, երբեմն և կարմիրը։ ԳՐԻՉ. Յովհաննէս գրիչ։ ՍՏԱՑՈՂ. «Սմբատ Պատրիկ որդի Վահրամայ» կամ «Սմբատ որդի Վահրամայ քᵒսասէր և բարեյաղթող Պատրիկ», որ աւետարանիս գրչութեան տարին առել է «զձեռ և զկարգ կրաւնաւորութեան» և «անուանեցայ Յովհաննէս ըստ վերակոչման հրաժարելոյ իմոյ ի ծփանաց կենցաղոյս»։ ԺԱՄԱՆԱԿ 1071—1080 թ. փրկչական. թուականի միաւորը չի կարդացուում. «Ի հինգ հարիւրորդի քսան . . . դի ամի թուարերութեան հայոց (ընդգծուածը հաւիւ տեսանելի) ի թագաւորութեանն Յունաց Միխայլին որդւոյ Տուկիծին . . . . (մի կամ երկու բառ) ի կուրապաղատութեանս Մարեմայ բարեպաշտի եւ հզաւրի . . . (մի բառ) եւ տᵒն որդւոյ. յամս տᵒծապատիւ և հոգեւոր տᵒն Գրիգորիսի եւ տᵒն Գեորգայ»։

Նկարուած է յիշատակաբանի մի հատուածը. ընագիրը 11×11½ սմ., մեր նկարը 10½×11,2 սմ.։

57. Մատ. Ս. Էջմ. № 257/288 (Կ. 250). Աւետարան, մագաղաթ, 22×16½ սմ.։ ԳԻՐ. Միջին երկաթագիր, երկիջեան, իւրաքանչիւրը 17×5,3, սմ. ներքևի ծանօթութեան հետ։ ԳՐԻՉ. ԱհարոնՔ գրիչ։ ՏԵՂ. «Աւարտեցաւ սᵒբ աւետարանս ի մայրաքաղաքս Աղեկսանդրու ընդ հովանեաւ Յովհաննու աւետարանչին»։ ԺԱՄԱՆԱԿ. 1099 թ. փրկչական. «ի թուականութեանն հայոց ՇՂԸ գրեցաւ սᵒբ (աւ)ետարանս»։

Լուսանկարուած է 171ᵐ. ընագիրը և լուսանկարը նոյն մեծութեամբ։

Դաճոր. Ուշադրութեան արժանի են կարմրագեղով, շեղագրին մօտեցող, անցման բոլորգրով յիշատակաբանները 75ᵖ. Մատթէոսի վերջում, և 280ᵖ. Յովհաննու վերջում՝ գրչի անունով։ Նոյն գրով են և աւետարան-